

Գիրքերէ ստրայտակ մը. — Ռուսիոյ մէջ Նացիականները մասնաշատուկ խումբեր կազմեցին կանոնաւոր կերպով գրատուններ կողոպտելու համար. արժէքաւոր երկերը Գերմանիա ճամբեցին ու մնացորդները փճացուցին: Քիչիւ մէջ հրապարակաւ այրեցին միլիոնաւոր գիրքեր. խարքով մէջ՝ Քոյոչէկքոյի գրատան գիրքերը՝ քարէ զանգուածներու պէս, ճամբաները սալաշատակելու գործածեցին երբ ինքնաշարժեր ցիխերու մէջէն չէին կրնար ազատորէն ընթանալ: Եւ ամէնէն աւելի ծանր նախատինքն եղաւ Թուրքոյակոն թանգարանին կողոպուտը, ուսկից տարուեցան բոլոր գիրքերն ու ձեռագրերը և կամ զինուորներէն գողցուեցան՝ ցրտասառոյց զիշերները իբր վառելիք գործածուելու:

Վիլնայի մէջ՝ քառասուն տարի աշխատութեամբ հաւաքուած ձեռագիրներու հազին ամբողջութիւն մը՝ որ լիթուանական բառգիրքի մը կազմութեան պիտի ծառայէր, հրկիզուեցաւ առանց պատճառի: Խտալիոյ մէջ ալ բաւական գրադարաններ փնասուած կամ մասամբ փճացած են, մասնաւորապէս ռմբակոծման ենթարկուած քաղաքներուն մէջ: Մոնթէքապինոյի հռչակաւոր վանքին դարաւոր հսկայ մատենադարանը և զիւանը բարեբախտաբար շէնքին ռմբակոծումէն առաջ մեծ մասամբ փրկուած էր, գերման ճիրաններէն ազատելով և փոխադրելով Վատիկան, թէպէտեւ մէկ երկու սնտուկներ իրենց արժէքաւոր բեռով ճամբանին շարունակած են զէպի հիւսիս, որոնք սակայն վերջերս Պալեիերայի մէջ գտնուեցան:

Ծայրագոյն Արեւելքի մէջ. — Ճափոնը միեւնոյն քաղաքականութեան հետեւեցաւ, այնպէս որ՝ Չինաստանի մշակութային հաստատութիւնները անդարմանելի փնասներու ենթարկուեցան: Չինաստանի համալսարանական գրատուններուն 70 առ հարիւրը կը գտնուէր ծովեզերեայ քա-

ղաքներուն մէջ, որոնք Ճափոններէն գրատուած էին: Չին-Ջոնայի համալսարանը ամէնէն հարուստը և լաւագոյն կազմակերպուածն էր. Ճափոնները հոն զօրանոց շինեցին. Ճոն Հէյի գրատունը զինուորական հիւանդանոցի վերածուեցաւ: Թշնամին երբ սկսաւ յառաջանալ Չին-Ջոնայի ուսանողները և բարձրագոյն վարժարաններու աշակերտներ Ազատ Չինաստանի փախան բեռնաւորուած թանկագին գիրքերով. հազար մղոնէն աւելի երկար ճամբայ մը կտրելով լեռներու վրայէն, անձայրածիր անապատներէն ռմբակոծումներու սպառնալիքին տակ, որով գիրքերէն շատերը թէեւ փճացան, բայց հազարաւոր երկեր ալ ազատեցան:

Ասոնք կամովին փճացուած, կամ ուղղակի պատերազմին պատճառաւ կորսուած գիրքեր էին. իսկ անդին դեռ ամբաւքանակութեամբ փճացան կամ ջնջուեցան անուղղակի հետեւանքով՝ անհոգութեամբ, անփորձութեամբ և կամ գէշ կերպով շտեմարանուելով: Խտալիոյ մէջ՝ Նացիականները Չեքանոյէն քաշուած ատենին հինգ վեց հազար հատորներ լքեցին ու գացին: Այս թանկագին բեռը յետոյ գտնուեցաւ՝ անձրեւէ, որդերէ, մզլոտութենէ և առանձներէ փճացած վիճակի մէջ. նոյնպէս Անգլիոյ մէջ այս կերպով հազարաւոր հատորներ կորսուած են:

Իսկ Գերմանիոյ մէջ ռմբակոծումներէն քարուքանդ եղած քաղաքներուն գրատունները և գրենական հարստութիւնը: Անոնց մասին անշուշտ Գերմանացիներ իրենք պիտի կարենան որոշ գաղափար մը տալ, երբ պարտութեան հետեւանքով իրենց վրայ ճնշող սեղմումներէն ազատած, բոլոր հարեւան ժողովուրդներու հետ՝ լծուին վերաշինութեան աշխատութեան և քաղաքակրթութեան բարենորոգումին:

Վերաշինութիւն. — Արդ, քաղաքակիրթ աշխարհը եղբրական աշխատութեան մ'առջեւ կը գտնուի վերաշինելու այս

ՀԵՆՐԻ ՄՈՐԿԸՆԹԱՈՒ

մատենադարանները. պէտք է վերականգնել կործանուած գրատունները ու վերակազմել մատենական հարստութիւնը: Տեղափոխուած բոլոր գիրքերը պէտք են ճշգրիտ և իրենց օրինաւոր տէրերուն ու տեղերուն դարձուիլ: Դժբախտաբար՝ միակ օրինակ թանկագին կտորները անդարմանիլիօրէն կորսուած են՝ միւսներ ըկարելի է կրկին տպագրել՝ թէեւ տարիներու պէտք կայ միլիոնաւոր գիրքեր հաւաքելու ու կրկին տպագրելու համար:

Այս հսկայական հարցը լուծելու համար յատուկ միութիւններ, ընկերութիւններ կազմուած են՝ որոնք արդէն Հոլանտադրկաւ են երկու հազար հատորներ. որոնց անհրաժեշտ պէտք կար: Անգլիացի և Ամերիկացի գիտնականներ բաւականաչափ գիրքեր կը նուիրեն Մոսկուայի մէջ բացուած Բժշկական Մատենադարանի կեդրոնին: Այս երկու կառավարութիւնները դարձեալ ամէն զիւրութիւն կ'ընծայեն գիրքերու առաքման: Բայց արմատական վախճանի մը հասնելու համար՝ համաձայնական նախարարներու Համաժողովը կը հաստատէ միջհամաձայնական կեդրոնական մատենադարանի յատուկ յանձնաժողով մը. ազգային և համալսարանական գրատուններուն գիրք հայթայթելու նպատակով: Տասնեակ հազարաւոր գիրքեր արդէն այսպէս հաւաքուած են և ուրիշներ հաւաքուելու վրայ են:

Համաժողովներ, համամիութիւններ երբ առանց ցեղի խտրութեան հոգեւին կը լծուին վերականգնելու քաղաքակրթութեան ու մշակոյթի այս աղետալի քանդումն և աւերումը, անշուշտ խորապէս կը մտահոգուին, կը դարձնուին գաղափարապէս նաեւ ապագայի համար, ցմիշտ խափանելու աղետալի պատերազմները: Մարդկութիւնը, և մարդկութեան հրաշակերտները փրկելու արմատական միակ միջոցը այս է:

Հ. Յ. Բ.

Մարդու մը հոգւոյ բարձրութիւնը, լայնախոհութիւնը շատ անգամ կ'արտացոլայ խօսքին ու գործին մէջ: Խօսքս գիւանագիտութեան կամ գիւանագէտի վրայ չէ, ուր յաճախ արտաքին պաշտօնական մարդը՝ հակապատկերն է ներքին իրական մարդուն: Անհատի մը, անիրաւուած, ընկճուած ժողովուրդի մը պաշտպանողական ընելու համար՝ ջատագովական հատորներ կազմելու անհրաժեշտ հարկ չկայ, երբ մանաւանդ պետական անձնաւորութեան մը կողմէն է այդ վեհանձն վճռականութիւնը: Կ'ըսեն. «խօսքը կը թռչի, գիրքը կը մնայ»: Բայց երբեմն կան նաեւ խօսքեր որոնք հոգիներու մէջ կը քանդակուին ու կ'ապրին սերունդէ սերունդ:

Հենրի Մորկընթաու եղաւ ան սակաւաթիւ լուսամիտ զէմքերէն մէկը՝ որ առանց երբեք նկատողութեան առնելու պետական մարդու փափուկ դիրքը, և առանց վրդովելու իբր դեպքին իր ներկայացուցած ժողովուրդին քաղաքականութիւնը, կրցաւ համարձակ և անվերապահ քաղաքակրթութեան երեսին պռաւ ու քսաներորդ դարու եղեռնական գործերը այսպանել բարձրագոյն: Ան դեպքան էր Պոլսոյ մէջ, 1913-1916 յունական և մանաւանդ հայկական աղէտին ամէնէն բուռն և ահաւոր շրջանին, երբ՝ Պոլսոյ մէջ երեսփոխան Զօհրապէն, Վարդգէսէն սկսեալ երեւելի շատ մը զէմքեր ու մտաւորականներ ձերբակալուելով խուճար խուճար կը զըրկուէին զէպի մահ, երբ գաւառներու հայ ժողովուրդը իր պապեանական դարաւոր բոյներէն բռնաբարձ կը տարուէր ոչխարներու հօտերուն պէս, թշուառ վիճակի մէջ, զէպի սպանդ: Երբ Վանիէն հայ մանիոյ ամենագոր դեպքանը շնական լուծեամբ կը հաստատէր թէ՛ Թուրքիոյ ներքին գործերուն... չէր կրնար խառնուիլ,

Մորկընթառու, պաշտօնական միակ մարդը, թուրք պետական շատ մը կնճիռներէն ետք հասու եղաւ աղետալի իրականութեան, զիւնազիտական կեղծ ու շահախնդիր դարձուածքներն արհամարհելով, մարդասիրական զգացումով միայն տողորուած, յանուն քսաներորդ դարու քաղաքակրթութեան, և յանուն մարդկային իրաւանց և արժանապատուութեան՝ բողոքեց թրքական բռնութիւններու դէմ, թուրքիոյ քրիստոնեայ ժողովուրդներու հանդէպ գործուած անլուր և աննախընթաց ոճիրներու դէմ, և իր բողոքը արձանագրեց՝ Յիշատակարաններ, և կամ Վռախորի Գաղտնիքները հատորին մէջ (1918)։ Մորկընթառուի պատմութեան հատորը պիտի մնայ իբր կոթող մը՝ բողոքի և մարդասիրութեան ապագայ սերունդներու առջեւ։

Հէնրի Մորկընթառուի ծննդավայրը եղաւ Մանհայմ (Գերմանիա) 1856ին։ Ծնողացը գործերուն անյաջողութեան պատճառով՝ անոնց հետ միասին փոխադրուելով Միացեալ Նահանգները 1865ին, յաճախեց տեղական վարժարաններ, և ապա ծնողացը կարօտ վիճակին օգնութեան հասնելու համար՝ չնչին շարժականով մը աշխատանքի լծուեցաւ։ Կամքի կորովով յաղթեց դժուարութիւններու, և ըրած փոքր խնայողութեամբ՝ յաճախելով Նիւ-Եորքի, Քոլումպիա համալսարանը, փաստարան տիպոգրֆ պատկերեցաւ 1877ին։ Ուսման վար զգացումներու տէր՝ իր փաստարանական կարողութիւնը գործածեց միշտ արդարութիւնը պաշտպանելու։ ձեռներէց, գործունեայ ու վճռական միտք, հիմնեց զանազան դրամական ու կալուածական հաստատութիւններ։ Ան՝ եղաւ նաեւ Ամերիկեան Կարմիր Խաչի հիմնադիրներէն։ Ուսման վարներու շերտ պաշտպան, սերտ բարեկամութեամբ միացաւ Ուիլսոնի թեան, և անոր ստիպումով մտաւ քաղաքական ասպարէզ։ Թուրքիոյ դեսպանութեանէն ետք, 1919ին Լեհաստան ղրկուեցաւ իբր Պետ Քննական Ֆանձնախումբի, և

ապա 1923ին Յունաստան, փոքր Ասիայէն և Արեւելեան Թրակիայէն փախուստով եկած Յոյները տեղաւորելու համար Յունաստանի մէջ։ Ֆրանքլին Ռուզուելթի նախագահ ընտրութեան ատեն ան կարեւոր դեր մ'ունեցաւ։ Իր բարեկամին համար ըսած էր. «Հոգեկան մեծ ղեկավար»։

Հէնրի Մորկընթառու, արդարութեան այս ռազմիրան, հայութեան բարեկամը՝ կը մեռնի անցեալ նոյեմբեր 25ին իննըսուն տարեկան ծերունադարձ հասակին, աղաւթութեան ձգտող ճնշուածներու և Հայ Ժողովուրդի սրտին ու մտքին մէջ ապրելու՝ իր «Յիշատակարան» յուշարձանովը անմահացած։

Հ. Յ. Բ.

ՓՈՐՁՈՒԹԻՒՆ

Մուշեղ Էմ Ես Մուսաները երէկուան Որոնք ինծի սերոյ յոյժեր կու տային, Ու իրենց անուշ համբոյրներով երկնային Կը շոյէին հոգիս ժպտուն, մանկական...

Ու խաբէցին ամէն անգամ զիս անոնք Պատրանքներով սըտապատիր գեղեցիկ, Եկան ինծի իբրեւ ոգի ու պարիկ. Երազներու հետ յուսախաբ ու անհոգ։

Եւ հաճոյքի ամէն շունչին համար գող, Երանութեան ամէն հեւքին համար սին, Սիրտըս խորունկ, Լայն վերքերով ծակեցին Ու լըքեցին վշտերուս հետ մենամուլ։

Աւ չեն կրնար անոնք խաբել հոգիս փորձ... Եթէ նոյնիսկ փորձութիւնը գրկէ զիս Ու փաթթուի հեշտանքներով իր վըզիս. Պիտի սիրեմ զինքը իբրեւ սերուն զ...:

ՅԱԿՈԲ ԳՈՒՅՈՒՄՅԱՆ

Ֆիլատելիա
2 օգոստոս 1943

ԳԻՏԱԿԱՆ

ԹԻՔՈՅ ՊՐԱՆԷ

Գիտական աշխարհը կը տօնախմբէ թիքոյ Պրահէ աստղաբաշխի ծննդեան 400ամեակը։ Բազմավէպ, արձագանգն ըլլալով այս միջազգային յարգանքի տրիտուրին՝ հանդէպ մեծ գիտնականին, համառօտիւ կը ներկայացնէ իր ընթերցողներուն՝ անոր կեանքն ու գիտական գործունէութիւնը։

Թիքոյ Պրահէ՝ շուետական ծագումով դանիացի ազնուական ընտանիքէ մը կը սերի. ծնած է 14 Դեկտ. 1546-ին Շօնէն գաւառի Քնուտսթրոփ աւաւին մէջ։ Նախնական ուսումները զինքը կը պատրաստէին զրական ասպարէզին նուիրուելու։ 13 տարեկան եղած ժամանակը Քոփենհագէնի համալսարանը ղրկուեցաւ հետաւորութիւն և իմաստասիրութիւն սորվելու համար։ Հոս՝ 1560 օգոստոս 21-ին աւանատես եղած էր արեւու ամբողջական խաւարումի մը. այս երեւոյթը այնքան խորապէս ազդեց երիտասարդին վրայ՝ որ որոշեց աստղաբաշխութեան նուիրուիլ։ Ծնողքին ու դատարարակներուն կամքին հակառակ՝ նա գնեց զիրքեր ու քարտէսներ ու գաղտնի կը կարդար զանոնք։ Հապսպուրկի մէջ ծանօթացաւ Հայնցը Եղբայրներուն (Պօղոս և Յովհաննէս) որոնք նոյնպէս մեծ սէր կը տածէին աստղաբաշխութեան հանդէպ, ու ասոնց օժանդակութեամբ շինել տուաւ քանի մը աստղաբաշխական գործիքներ, սովորականէ մեծ չափերով։ Այս ատեններս է որ մենամարտի մը ժամանակ ըթին մէկ մասը կորսնցուց, զոր դարմանելու համար ստիպուեցաւ արծաթէ ըթ կրել։

Իր ծննդավայրէն ոչ շատ հեռու կ'ապրէր մօրեղբայրներէն մէկը՝ որ մեծ համարմունք

ունէր թիքոյի վրայ. անոր տրամադրութեան ղրաւ ղղեակին մէկ մասը՝ դիտարան մը շինելու համար։ Հոս է որ 1572 նոյ. 11-ին թիքոյ Կասսիոպէ համաստեղութեան մէջ՝ նոր աստղ մը նշմարեց, իր յաջորդական դիտողութիւնները հաստատեցին թէ իրապէս աստղ մ'է երեցողը և ոչ թէ զիսաւոր մը։ Երկու տարի վերջ՝ աստղը նորէն աներեւոյթ կ'ըլլար։ Այս երեւոյթը թիքոյ մանրամասն նկարագրութեամբ հրատարակեց «De stella nova» գրքոյին մէջ, որուն մէջ պակաս չեն նաեւ ժամանակի ազդեցութեան տակ խորհրդաբանական մեկնութիւններ ալ։ Իր այս գործով մեծ համբաւի տիրացաւ։

Փրեզերիկոս Բ հրաւիրեց զինքը իբր ուսուցիչ Քոփենհագէնի համալսարանը։ Ուսման շրջանը աւարտելուն՝ ուզեց հայրենիքը թողուլ՝ սակայն թագաւորին պընդումին վրայ մնաց Տանիմարը՝ շարունակելու իր գիտական աշխատութիւնները։ Թագաւորը իրեն իւրէն կղզին տրամադրեց՝ վրան դիտարան մը կանգնելու՝ հոգալով միանգամայն ծախսը։

Մեծ գիտնականը հոս աշխատեցաւ 21 տարի շարունակ անթիւ դիտողութիւններ հաւաքելով, որոնց վրայ յետոյ Քեփլէր և Նեւտոն հաստատեցին իրենց տիեզերական օրէնքները։

1590-ին Փրեզերիկոս Բ-ի մահէն վերջ՝ անոր որդին Քրիստիան Գ շրջապատուած թիքոյի նախանձորդներէն՝ գաղբեցուց օգնութիւնները։ Սակայն անոր գիտութեան համբաւը կը հնչէր արդէն բոլոր արքունիքներուն մէջ ու թագաւորներ կը ջանային զինքը ունենալ իրենց արքունիքը. ասոնց մէջ առաջնութիւնը ունեցաւ Ռուստոփ Կայսրը. ուստի թիքոյ թողուլ հայրենիքը՝ Փրակա մեկնեցաւ։ Հոն իբր օգնական կանչեց իրեն Քեփլէրը։ Թիքոյ Փրակայի մէջ վախճանեցաւ 24 հոկտ. 1601-ին 55 տարեկան հասակին մէջ։

Թիքոյ Պրահէի գլխաւոր գործը եղած է «Astronomiae instauratae gym-